

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N 1069-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2022 թվականի N _____-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ
1-Ի N 1069-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Չինվորական ծառայության և զինծառայողի
կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ
հոդվածի 5-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ
և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը
որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի
1-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ
ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական
ծառայության 2021 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու
մասին» N 1069-Ա որոշման հավելված 1-ի՝

1) 2-րդ կետի 3-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել.

2) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3-րդ ենթակետով.

3) «Թադե Արմոնդի Հաղվերդյան (ծնվ.՝ 05.05.2003 թ., հաշվառման վայրը՝
քաղ. Երևան, Չարյան 74 շ., բն. 30, Բրիտանական Կոլումբիայի համալսարան):
Նվաճումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի
ապրիլի 12-ի N 451-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետ:»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 1069-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1069-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1069-Ա որոշմամբ սահմանված Թադե Արմոնդի Հաղվերդյանի ուսումնառության ժամկետի ավարտի փոփոխության անհրաժեշտությունից:

2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

Քաղաքացի Թադե Արմոնդի Հաղվերդյանը 2021 թվականին ընդունվել է Ամստերդամի Վրիժ և Բրիտանական Կոլումբիայի համալսարանների **բակալավրիատ** (երկու բուն էլ ընդգրկված են <http://www.shanghairanking.com> կայքի համապատասխան ցուցակներում) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1069-Ա որոշման համաձայն, Ամստերդամի Վրիժ համալսարանի կողմից տրված տեղեկանքի, նրան մինչև 2024 թվականի ծմեռային զորակոչը տրվել է տարկետում՝ նվաճումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման հավելվածի 9.1-րդ կետի:

Սակայն քաղաքացին հետագայում նշել է, որ ուսումը շարունակելու է Բրիտանական Կոլումբիայի համալսարանում:

Նշված փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է նշված բուհի կողմից տրված տեղեկանքով՝ ըստ որի Թ.Հաղվերդյանի ուսումնառությունը ավարտվում է 2025 թվականի դեկտեմբերին:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի

1-ի N 1069-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունմամբ հնարավորություն կընձեռվի քաղաքացի Թ. Հաղվերդյանի ավարտելու ուսումնառությունը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1069-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

5. Նախագիծը չի բխում ռազմավարական փաստաթղթերից: